ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ՄՐԳԱՆՈՒՇ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ N 12

19.11.2012թ.

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետով ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել համայնքի զարգացման քառամյա ծրագիրը՝ համաձայն հավելված N2-ի :

Ավագանու անդամներ՝ Ց.Ալեքսանյան

Ա.Այվազյան

Ա.Սահակյան

Կ.Միրզաբեկյան

Ա.Ծատուրյան

Համայնքի ղեկավար՝ Մ.Սարգսյան

Հավելված

Մրգանուշ համայնքի ավագանու 2012թ-ի

նոյեմբերի 19-ի թիվ 12 որոշման

Բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով,բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական,մշակութային և հանգստի պայմանները գյուղը դարձնել գեղեցիկ,բարեկարգ:Բարեփոխումներ կատարելով նախատեսվում է հասնել հետևյալ նպատակներին՝

1. Զարգացնել գյուղատնտեսությունը
2. Համայնքը ապահովել շուրջօրյա խմելու ջրով
3. Կազմակերպել համայնքի բնակչության մշակութային կյանքը և հանգիստ աշխատանքից ազատ ժամերին
4. Ապահովել բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների նորմալ և անվտանգ երթևեկությունը

Ըստ առանձին բնագավառների առաջնահերթ ծրագրերի նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում

Ծրագիր 1

Խմելու ջրի ցանցի վերանորոգում

<u>Ներածություն</u>

Համայնքի ջրամատակարարման համակարգը կառուցվել է 1990թ-ին:Ջրագծի երկարությունը կազմում է 5 կմ:

Ծրագրի նկարագրությունը և հիմնավորումը

Համայնքի խմելու ջրի ջրագծերը,որոնք ենթակա են վերանորոգման ,անցնում են ճահճուտ վայրով:Խողովակների մաշվածության հետևանքով առաջանում է ջրի

կորուստ,իսկ քանի որ համայնքը ապահովված չէ շուրջօրյա խմելու ջրով,ապա հնարավոր է կեղտաջրերի ներթափանցում խմելու ջրի մեջ:Համայնքի հրատապ խնդիրներից է խմելու ջրի ջրագծերի հիմնական վերանորոգումը:

Ծրագրի նպատակն ու խնդիրները

1.Ապահովել համայնքը շուրջօրյա խմելու ջրով

2.նվազեցնել խողովակների մաշվածությունից առաջացած ջրի կորուստները

3.Կանխել կեղտաջրերի ներթափանցումից առաջացող սուր վարակիչ հիվանդությունները:

Ծրագրից սպասվող արդյունքները

Իրականացնելով այս ծրագիրը համայնքը 90%-ով կապահովի շուրջորյա խմելու ջրի կորուստները, ներկայիս 30-50%-ից հասնելով 10%-ի կբարելավվի գյուղի ազգաբնակչության սոցիալ-տնտեսական պայմանները:

Ծրագրի ֆինանսական,միջոցների գնահատում

Նախնական մոտավոր հաշվարկներով 5 կմ երկարությամբ ջրագծերի վերակառուցման աշխատանքների արժեքը կկազմի մոտ 16 միլիոն դրամ:

Ծրագիր 2.

Ոռոգման ջրի ջրագծերի վերանորոգում

<u>Ներածություն</u>

Ոռոգման ջրի ջրագծերի երկարությունը կազմում է 5 կմ:

Ծրագրի նկարագրությունն ու հիմնավորումը

Ոռոգման ջրի ջրագծերը ունեն շուրջ 25 տարվա պատմություն:Նրանք քայքայվել են և օգտագործման պիտանի չեն:Եթե վերանորոգվեն այդ ջրագծերը,ապա շուրջ կապահովվի 184.0 հա հողատարածք:

Ծրագրի նպատակն ոի խնդիրները

1.Ապահովել հողատարածքների ոռոգումը նորմալ կարգով

2.բարձրացնել հողերի բերքատվությունը,ավելացնել գյուղ մթերքների արտադրությունը

Ծրագրի իրագործման համար անհրաժեշտ է լուծել մի ծարք կարևոր խնդիրներ

1.Ապահովել համայնքի կողմից պահանջվող ներդրումը

2.Կազմել ծրագրի նախահաշվային փաստաթղթերը

Ծրագրից սպասվող արդյունքները

1.Համայնքն ապահովել մշտական ոռոգման ջրով

2.Կավելանա գյուղմթերքների արտադրությունը

Ծրագիր 3

Համայնքի ներքին ճանապարհների բարեկարգում

<u>Ներածություն</u>

Ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկարությունը կազմում է 4 կմ-ից ավելի,որից 1000մ-ը կենտրոնական ճանապարհն է,որը արդեն ասֆալտապատ է մնացածը կարիք ունեն ասֆալտապատման:

Ծրագրի նպատակն ու խնդիրները

1.Ապահովել տրանսպորտի բոլոր միջոցների նորմալ երթևեկություն

2.Վերացնել փողոցների ջրափոսերը

3.Կատարել փողոցների բարեկարգման և ասֆալտապատման աշխատանքները:

Ծրագիր 4

Համայնքի գազաֆիկացում

Համայնքն ունի գազաֆիկացման համակարգ,սակայն գյուղում կան նոր փողոցներ,որոնք դեռևս գազաֆիկացված չեն:Գյուղի հրատապ խնդիրներից է գյուղի նոր փողոցների գազաֆիկացումը:

Ծրագրի նպատակն ու խնդիրները

1.Ապահովել համայնքի բնակչությանը գազով,բարելավել ազգաբնակչության կոմունալ-կենցաղային պայմանները:

Ծրագրից սպասվող արդյունքները

1.Կբարելավի ազգաբնակչության կենցաղային պայմանները

2.կխնայի էլեկտրաէներգիան:

Աշխատակազմի քարտուղար՝ Ա.Սահակյան